


**ՊԱՐՍԿԱՀԱՅՔ**



## 1. ԱՆԴՐԱՆԵԿԻ ԽԵՔՅԱԹ

Ժամանակով մե թագավոր կար, ըտուր ուներ ութը կնիկ, ութ հատ էլ ձի ուներ, ձիան մեհտար ուներ մե խատ, էտ թագավոր սախմանք ուրան մեհտարին շաբաթ մեկ հատ կըսպաներ, ընչի՞ խամար:

Թագավորի խողի մեջը ութ խատ հարամի կար, էտ հարամիք սազված ին թագավորի կնկտերի խետ, հիրկնե հիրկուն կուգին ձիանք կըքյաշին դուս, կըհտերն էլ կիջնին ուրանց տեղրանքից, կըխեծնին էտ հարամիքի թարկը, կէթին, մե ջոչ զաղա կար, էտ զաղի մեջ: Չուր լուս կուտին, կըխմին, քեփ կանին, լուսի դեմը կըբերին կուգին:

Ձիանքի մեհտարը չուր որ կեսօր կըլեր, անջախ էտ ձիանքի քրտինք կըսրբեր, ձիանքը չին կըլավնե: Նաբաթ մե անգամ թագավոր կուգիեր ուրան ձիանքին տենալու, տեներ, որ ըսկի չըկլավցավ, մեհտարի վրեն կըհերսոտեր, կըսպաներ: Էլ քաղաք ջահել չըմնաց, հըմեն բռնեց մեհտար, ըսպանեց:

Մե օր մե տղա էտ թագավորի բանն հիմացիր էր, գնաց կայնավ թագավորի դեմ, ասավ.—Թագավո՛ր, ես կլեմ քյո ձիանքին մեհտար:

Որ թե՝ ափսոս ես, քեզի կըսպանեմ:

—Ընչի՞, թագավո՛ր, ընչի՞ կըսպանես:

—Իմ ձիանք լավ չես կըլավցու, քե կըսպանեմ:

—Զէ՛, թագավո՛ր, ես էն մեհտարների պես չեմ, լավ կըպախեմ:

—ԱՀան քեզի ամիս քսանըմինք մանեթ, գնա ձիանք պախս:

Որ շաբաթ թըմավ, կուգամ ձիանքին կըտենամ, որ լավ չըկըլավցած, քեզի կըսպանեմ:

—Շա՛տ լավ, թագավո՛ր, շա՛տ լավ:

Էտ տղեն գնաց կայնավ ձիանքի կուշտ, ձիանք պախսպանեց մինչ ի իրիկուն, հիրիկուն տեսավ, որ հարամիք դռնեն մտան:

—Հա, մեհտար, ձեանք հըլա չե՞ս թամքե:

— Զէ՛, աղա՛, չի հիմացե ձեր գալը:

— Դե, թամքա՛:

ՄԵՀՏԱՐԸ ձիանք թամքեց, հարամիք ձիանք քաշին դուս, կը Հ-  
տեր ուրանց տեղրանքից իջան, էկան, ամեկ խեծան մե հարամու  
թարկ, գնացին էտ զաղի մեջ:

Էտ ձիան մեհտարը խրտ հետևներին գնաց, գողտուկ, գնաց  
խտոնց գործն հիմացավ, ետ դարձավ էկավ, ուր տեղ կայնավ: Գի-  
շեր թագավորի կը Հտեր ձիանք բերեցին էկան: Էտ օր հընցավ, էն  
մեկէլ օր մեհտարը գնաց մո թագավոր:

Ասավ. — Թագավոր՝, մե բան կը լսնողեմ, էտ քո գեստ տոռ' ըն-  
ձի, խագնեմ ըլնեմ թագավոր, նստեմ քո թախտի վրեն, իմ շորեր  
դու խագի՛, գնա էս մեկ գիշեր էլի՛ մեհտար:

Թագավոր միտք արավ, ասավ. — Թո ըլի քու ասած:

Թագավոր ուր շորեր խանեց, տվեց մեհտարին, մեհտարի շո-  
րերն առավ զինք խագավ, գնաց կայնավ ձիանքի կուշտ, մեկ էլ  
տեսավ հարամիքն էկան:

— Հա՛, մեհտա՛ր, ձիանք չե՞ս թամքե:

— Զէ՛, աղե՛ք, խապար չի, ես թազա մեհտար եմ էկե:

— Դեհ թամքա, բան չըկա:

Ձիանք թամքեց թագավոր, հարամիք քաշին դուս ձիանք, թա-  
գավորի կը Հտեր ուրանց տեղերից իջան էկան. խեծան ձիանք,  
թագավոր խետ հետևներին էլավ, տեսավ, որ ուր կը Հտեր խեծան  
ձիանք, էն մեկ կնիկն ասավ. — Ախչի՛, ախչի՛, էն էրեխեքն էլ բե՛  
խետդ:

Թագավոր ուներ մե պզտի տղա, մե պզտի ախչիկ, կը Հտեր վեր-  
ցին տարան խետեր, թագավոր խետ ետևներին գնաց, գնաց տե-  
սավ մե ջոչ զաղա կա, թագավոր ուրին պախ տվեց էտ զաղի մեջ,  
տեսավ, որ ուր կը Հտեր, հարամիք կերան, խման, հելեք մե պըտը-  
տինք, դուս խովանանք, գանք քնենք:

Հելան դուս պըտըտելու, թագավորին տեսան, բոնին, բերին  
կապին սնից, ճրագ դրին վըր գլխուն, հարամիք ամեք մեկ կնիկ  
առան, պառկան քնան: Թագավորին շատ դժար էկավ, ճոպանով  
վոնըրից փաթաթած ին չուր գլոխ, էն տղեն, ախչիկն էլ էնա մե յա-  
նի վրա թալած ին, ընտոնք էրեխա ին, քնած ին: Թագավոր ինչքան  
չարչըրվավ, չըկարցավ պրծներ, ախչիկն ջոչ էր թագավորին, ձեն  
տվեց ախչկան թագավոր:

— Ախչի՛, ախչի՛, հելի՛, բան կասեմ:

Ախչիկն հիմացավ, «էս ո՞րն ա», ասավ:

— Ես քո խեր թագավորն եմ:

— Զեմ ճանչնա քըզի, ում՝, խորս խանե՞մ վեր:

—ԶԵ՛, ՀԵ՛, ՔԱԻ՛, ՔԱԻ՛:

—Անդրանե՛կ, Էլի՛ վեր, Էլի՛ վեր:

Անդրանեկ որ հիմցավ, աշքն առավ թագավորին, տեսավ, որ ուր խերն ա, լացավ, էրեխա տղա էր:

—Անդրանե՛կ ջան, մի՛ լաց, հելի էնա կամեն բե՛ր:

Տղեն էլավ խանչալ բերեց:

—Խանչալն ա՛ռ, քաշի էս ճոպան կտրա՛:

Տղեն չըկարցավ խանչալ քյաշեր, պղտի տղա էր:

Որ խերը տեսավ, չըկանա խանչալ քյաշա, ասավ.—Անդրա-նե՛կ, էն բուռը տո՛ւ իմ բերան:

Խանչըլի բուռը տփեց թագավորի բերան, Անդրանեկ քա-շեց խանչալ խանեց: Անդրանեկ խանչալն առավ, ճոպան կտրեց: Թագավորն արձեկվավ, իջավ հարամբաշու թուրը քաշեց, օխտին կտրեց, մնաց հարամբաշին:

Թագավոր էլավ կայնավ ուրա տեղն: Հարամին հիմցավ:

—Թագավո՛ր, ըսկի ի՞նչ ես տեսեր:

—Հարամբաշի՛, գիշեր էրազին ութը մնադուկ տեսա:

—Ապա ի՞նչ տեսակ էլան:

—Օխտը թուան, մեկը մնաց:

—ԱՀԱ՛, —ասավ, —դու իմ ախազերներն ես սպանե: Հարամի բաշին հելավ կայնավ, թագավորի խետ խասան հիբար, թագա-վորն հարամբաշուն հաղտեց, վերուց տփեց գետին: Հարամբաշու վիզ կտրեց, հելավ ուրան ձիանք, ուրան Անդրանեկ տղեն վերուց, զաղի միջեն դուս էկավ: Շատ կուվաթով թագավոր էր, ուրան ու-թը կնիկ, մի ախչիկ, թողեց մըջ զաղին, բերեց զաղի դուռ քարով շարեց, շատ ջոշ-ջոշ քարերով:

—Քանի սադ եք, մեկմեկու ջանդակ կերե՛ք, իմ դիվանն էս ա:

Էկավ ուրան տուն: Գնաց ուրան ձիան մեհտարի կուշտը, ձիան մեհտար, որ տեսավ թագավորն էկավ, շուտ էլավ կայնավ, թախ-տից էջավ:

—Թագավո՛ր, արի քյո չորերն ըստացի՛:

—ԶԵ՛, որդի՛, —թագավորն ասավ, —թախտը քեզի ա արժան, ինձի արժան չէ, ես որ էս բանը տեսա, չեմ ուզեր էս խողի մեջ կայ-նել, որ իմ ձենը դուս չենի, կէթամ ուրիշ երկիր կապրեմ:

—Զիան մեհտար թագավոր, կըխնդրվեմ քեզնե, քյո խազինից ինձ մե բան փոխ տաս, ես էթամ:

Մեհտարը բերեց դրան բավականի փող տփեց, չնորհակալու-թեն առավ մեհտար թագավորից, ուրան ըոփաթ, ուրան խազնեն ինչ որ կար հանձնեց մեհտար թագավորին, ուրան Անդրանեկ տղի ձեռ բոնեց, քնաց: Քնաց Մինեղ թագավորի խողը, մե պառվի տան

դոնաղ Էլավ: Մեկ ամիս մնաց էտտեղ, միտք արավ, թե ես էստեղ չեմ կարա ապրե էսենց, ըլեմ քաղաքի մեջ մե գործ գտնեմ ընձի, ապրեմ: Անդրանեկն հանձնեց պառին, պառավն արավ ուրին տղա: Էտ թագավոր գնաց քաղաքի մեջ, էստեխ-էնդեխ պըտըտավ, գնաց Էլավ Մինեղ թագավորի ձիանքի մեհտար: Գանք թըխ Անդրանեկ տղեն:

Նելավ մե տաս-տասնըխինդ տարեկան Անդրանեկ, շատ կուփաթով փայլեան էլավ, գնաց ուրին մե զողալ չոմախ առավ, բերեց, էկավ Հոլ կրխաղեր՝ կայնե՛ք, կասեր, Հոլ զարնեմ ուրան հընկերներին, մե փտանոց քյողուկ արեր էր Հոլ, էտ զողալ չոմխով որ կրգարկեր էտըրան, կէթեր կառներ ուրան հընկերներին, որի թե կրկոտրեր, որի ոտ կոտրեր, օրական կէթին թագավորի կուչտ գանգատ՝ պառի տղեն՝ Անդրանեկ, մեր տղեքին հըմեն ըսպանեց:

Թագավոր կասեր.—Սուտ ա, էն պառին տղա չըկա, մե որբ պառավ ա:

Օրերից մե օր պառավն ասավ.—Անդրանե՛կ, ըլուր չունենք, որ խաց թիւնենք:

Անդրանեկն ասավ.—Նանե՛, աղուն փուա՛, թո չորնա, տանեմ աղամ ըլուր:

Պառավն ասավ.—Ապա աղունին ո՞ր մողաթ կենա, խավեր չուտեն:

Անդրանեկն ասավ.—Ես մողաթ կենամ:

Պառավն ասավ.—Դու մողաթ չես կենա, ճժեր տեսար կալեր՝ կէթաս:

—Զէ՛, չէ՛, նանե՛, վոլա՛, չեմ էրթա:

Պառավ բերեց տանիս աղուն փուեց: Անդրանեկն էլավ կայնավ կուշտ, պառավ բերեց իբրև ֆանդ արավ, ճոպան կապեց Անդրանեկի ոտից, կախեց հերսից, պառավն էկավ մտավ տուն, ճոպնի մե փոթն էլ կապեց ուր մեջք, նստավ խաց կըթխեր, խավերն էն դեխեն կուզին աղունի վրեն, Անդրանեկ կըվազներ խավերի հետև, պառավ խետ ոտին կըփուեր, կելեր հերդիս, կըվազներ, որ կուզեր հերսի վրեն, պառավն կէրթեր զըմփալեն գիներ թոնդրա շուրթ: Պառի կողրանք ջարդրվավ ըսմեն, պառավ հերսոտավ, էլավ Անդրանեկին խրկեց՝ չեմ ուզե, դու ընծի տղա չես, գնա՛: Անդրանեկ ուր չոմախ վերցուց ու գնաց: Գնաց ընկավ մե անմարդաբնակ երկիր, տեսավ, որ մե քառառուն ջան ըտեղ նստուկ են ճամխու դրաղ, գնաց ըտոնց բարեւ չըտվեց, ընցավ:

Բտոնք քառառուն հարամի ին:

—Այ մարդ, —ասին, —զու ի՞նչ մարդ ես, որ մեզ բարեւ չըտվիր:

Անդրանեկն ասավ. —Ճամբորդ եմ, կէթամ:

—Ինչքա՞ն կուվաթով ճամբորդ ես, որ մեզի իսկի բանի տեղ չըդիր:

—Դու ի՞նչ եք, —ասավ, —մկա չոմախ որ վերում, ձեր հրմենին կըջարդեմ:

Հելան սկսին կոփի: Քառառուն հարամուն էլ ջարդեց, թողեց գնաց: Գնաց մե քաղաքի մոտ, գիշեր տվեց վըրեն, մնաց գերեզմներ, գնաց մե քումբեթի մեջ նստավ, տեսավ, որ էտ քումբեթի ղեմը թազա գերեզման կա, գիշերվա մե վախտ տեսավ, որ մե Սև ձիավոր էկավ կայսավ էտ գերեզմնի վրեն, ձիուց իջավ, գերեզման քանդեց, բացեց էտ մարդին, զամչիկն ուրան ձիու խուրջից խանեց, մեկ դամչիկ զանեց, ասեց՝ թագավորի՝ տղա, հելի՛ վեր:

Թագավորի տղեն սաղցավ: Էտ ձիավորը սեհրի ախչիկ էր, Հուրուսիարի էր, իսկ ծովեղեն ախչիկ էր, ախչիկը խարցմունք արավ թագավորի տղից:

—Թագավորի՛ տղա, ընձի կառնե՞ս:

Թագավորի տղեն ասավ. —Զէ՛:

—Ես ա կըգանեմ՝ կըմեռնես հավիտենական, էլ չեմ իգա քեզի վրա:

Թագավորի տղեն ասավ ախչկան. —Մինչի հազար-հազար տարի էլ մեռնեմ՝ քեզի չեմ առնե, զու ծովեղեն եք, ես խողածին եմ, ինձի կըտանեք կըվնասեք, չեմ առնե:

Ղամչըկով զանեց թագավորի տղին. —Մեռի՛, —ասավ, —չուր Քրիստոս քա դատաստան:

Անդրանեկ որ տեսավ էտ ախչկա բանը, չոմախ վերուց վազավ: Չոմախով զանեց մըշ ձիան ճակտին, ձին հընկավ, ախչիկ փախավ, Անդրանեկն էկավ էն զամչըկով զանեց տղին, սաղցուց, գերեզմնից խանեց, տարավ տվեց ուր թագավորին, թագավորից շատ խալաթ ըստացավ ու գնաց: Գնաց մեկ ծովի դրադ, տեսավ, որ մե մարդ ծովի դրադի խետ կէթա ցածր, կուզա վեր ու կուլա:

Խարցուց Անդրանեկն էտ մարդին. —Այ մարդ, ինչի՞ կուլաս:

—Ապա ի՞նչ անեմ, կտրի՛ճ տղա, ես մեկ քյասիր մարդ եմ, նա-Փարի տեր եմ, էս ա կյամով կըպարապի, օրական կաշխատի, իմ էրեխեք կապրին:

Անդրանեկ խարցուց. —Ապա մկա ի՞նչ ա էլե:

Կյամըչին ասավ. —Կյամին որ ետ կըդառցեմ էժալու, ծովի մը-ջեն մե ձեռ դուս կուզա, կըթալի իմ գյամին կըշըչա, մըչու մարդեր կըխեղդվեն, չըթողա, որ ես էժամ իմ քաղըից դուս ըլեմ, իմ էրեխեք մացած էնտեխ անոթի, ես էլ մացեր եմ ըստեղ անոթի, էս ա մե ամիս ա՝ ես ըստեղ եմ:

Անդրանեկն ասավ կյամբչուն.—Կյամբչի՛, ես կըքնեմ մըչ գյա-  
մուն, դու կյամին կըքցես ծովի հերես, մի՛ վախեցի, կյամին քշ  
գնա՛, ինչ վախտ որ էն ձեռ դուս կուգա, ինձի խապա՛ր արա:

Կյամբչին կյամին քշեց գնաց ծովի մեջտեղ, տեսավ, որ էտ ձեռ  
դուս էկավ, կյամբչին վախեցավ, լեզուն բովավ, ոտով իրար տվեց,  
Անդրանեկն հելավ վեր, փանջարից պարզվավ, ձեռ թալեց, էտ ձե-  
ռը բռնեց, քաշեց ծովից խանեց, չոմախով էմալ տվեց ըտուր, որ  
ըտուր ջանի արունը ծովի հերես բռնեց, թողեց գնաց մըչ ծուփուն,  
կուրիսավ:

—Դե քշա՛, կյամբչի՛, քեզի էմալ շոշի ճամբախ եմ շինե, օր էլ  
մարդ չի գա քյո դեմ:

Կյամբչին կյամին քշեց տարավ, ծովից հանեց դուս, Անդրանեկ  
կյամու միջեն էլավ գնաց:

Գնաց քաղաքի կրաղ, տեսավ, որ էրկու մարդ, մե կնիկ կըկովին,  
խարցուց, ասավ.—Ի՞նչի կըկովեք:

Էտ մարդերն ասեցին.—Ես էլ որբեվերի եմ, էս մարդն էլ որբե-  
վերի յա, էս կնիկն էլ որբեվերի յա, էս կնիկ համ էս մարդուն կասա-  
քե կառնեմ, համ ընձի կասա՛ քե կառնեմ: Մկա ես կասեմ, թե կնիկ  
ես կըտանեմ, էս մարդն էլ կասա՛ ես կըտանեմ:

Անդրանեկ խարցմունք արավ էտ կնկնից.—Ա՛յ կնիկ, դու էս  
մարդերին կառնե՞ս:

—Խա՛, կառնեմ:

—Էրկըսի՞ն էլ:

—Խա՛, էրկըսին էլ կառնեմ:

Էն մեկ մարթի վրեն մեկ խատ կըմը կար, էտ մարթու վրավեն  
Անդրանեկ կըմեն առավ, ասավ.—Դու իմ դիվանին հոժա՞ր եք, որ  
ես ձեր դիվան անեմ:

Էտ էրկու մարթն էլ, էն կնիկն էլ հոժարացան, թե՛ մենք հոժար  
ենք:

Էտ Անդրանեկն ասավ.—Էս կնկա գլոխ կըտամ մեկիդ, ջանդակ  
կըտամ մեկիդ, հոժա՞ր եք:

Էտ մարդերն ասին, թե՛ Անդրանե՛կ, որ գլոխ կտրես, էլ ի՞նչ  
պըտի անենք: Ըտիկ որ բտենց ասավ, Անդրանեկ չոմախ վերուց,  
ըտոնց թալեց գետին ջարդեց ու էտ կնիկ առավ գնաց: Գնաց ըն-  
կավ մեկ ամայի տեղ, տեսավ, որ մեկ քոչկ-սարայ կա, գնաց մտավ  
էտ քոչկ-սարի մեջ, նատավ չուր հիրիկուն: Հիրիկուն տեսավ՝ իրեք  
խատ ախչիկ ձիով էկան իջան էտ սարայի դուռ, էկան ներս:

Էտ Անդրանեկ ուրին պախ տվեց, իտոնք չըտեսան:

Էն մե ախչիկ վերուց ասավ, թե՛.—Քրե՛ր, հէսօր, չեք ասե, ինչ

**Էլավ:** Մեկ Անդրանեկ անվոր տղե՞մ էկավ ծովի մեջ ընձի բռնեց, էնենց ջարդեց, որ ջանս կըմըոմըուա:

Էն մեկն ասավ.—Հա՛, էնի էն Անդրանեկն ա, որ գերեզմանի վրեն ընձի բռնեց, քյաշկա թե էնի դաս ըլներ:

Անդրանեկն հելավ էն դեխեն էկավ ախչըկների կուշտ, շատ ուրիշցան, շատ պատվեցին, թե ըսենց կոչախ տղա էկավ պատահավ մեզի, մի օր մնաց էտտեղ, էն մե օր իրեք քուրն էկան նստան, մասլահաթ արեցին:

Էն ջոչ քուրն ասավ.—Անդրանեկին ես քսանուչորս սըհաթի խասում ուրան քաղաք, ես առնեմ:

Միջնեկ քուրն ասավ.—Տասներկու սըհաթ Անդրանեկ խասում ուրան քաղաք, ես առնեմ:

Պղտիկ քուրն շատ կուվաթով ուժեղ էր, պղտի քուրն ասավ.—Ութը սըհաթի Անդրանեկին խասում ուրան քաղաք, ես առնեմ:

Անդրանեկ բերին տվին պղտիկ քվոր, պղտիկ քուր ուր ոչեղեն խագավ, Անդրանեկին, ուրան խետի կնոջ բերեց խասուց Անդրանեկի խոր քաղաք:

Մե ջուխտ խալխալ էր բերե խետ, էն խալխալներ կախեց ուրան կնկան վզեն, քաղաքի մեջ խառնիս էլավ, տարավ խաղցրեց: Էտ քաղրի վաղիրի ախչիկը վըքեն ուզեր էր ուրան տղին, էն էլ բերին խարսնիս տուն, խաղաց, աշկն ընկավ էն խալխալներին, գնացին հիրիկուն տունը, վաղիրի ախչիկը ուրան ոսկի-արծաթը քանդեց թափեց գետին:

—Ես էն վաքիլի տղին չեմ առնե:

—Ի՞՞նչի չես առնի:

—Ապա էն Անդրանեկի կնկա վիզ խալխալ ըլի, ես վաքիլի խարս ըլնեմ, իմ վիզ չը՞լի, ես չեմ առնի:

Գնացին վաքիլին ասեցին:

Վաքիլ ասավ.—Բան չըկա, ես էն խալխալ կըքերեմ:

Վաքիլ գնաց թագավորի կուշտ, թագավորին ասավ.—Թագավոր, չես ասի՝ ի՞նչ ի էլե, հէսօր գիշեր էն քյո խոր խազնի վրավի խալխալներ գտեր եմ:

—Ո՞րտեղ, վազի՛ր:

—Էլ կա՞ էն խալխալներից ախշարքի մեջ՝ ուրիշ թագավորներին, —խարցուց թագավոր:

—Զէ՛, թագավոր, չի գտնվե, քյո խերն էն ուրան թագա թագավոր վախտին իրեք միլոն փող էս մեր քաղաք մե խին զարգար կա, տվեց ընդուր, էտ խալխալներ էն զարգացար շինեց, բերեց դրեց ուրան խազինի վրեն: Մեկ ժամանակ՝ մ մնաց, գողերն էկան, խազնեն կտրին տարան, էն խալխալներն էլ տարան, հէսօր էրևաց:

—Ո՞րտեղ ա, վաքի՛լ:

—Թագա գյալմա Անդրանեկ անվոր տղեն մեկ ախչիկ առենշանվե, էն կնկա վիզն ա:

Թագավորն ասավ.—Գնացեք խանչե՛ք էն տղին, բերե՛ք:

Գացին Անդրանեկին կանչին, բերին մո թագավոր:

Թագավոր խարցմունք արավ.—Անդրանե՛ք, էտ քո խալխալ-ներ հո՞ւստ ա:

—Առեր եմ, թագավո՛ր:

—Ո՞րդուց:

—Ծովից:

Կանչեց էն զարգյարին էլ բերեց, վաքիլն գնաց գողտուկ զարգյարին հարիր մանեթ փող տվեց, ասավ.—Զարգյա՛ր, որ թա-գավոր քեզնե խարցմունք կանի՛ ասա՛, իմ շինած խալխալներն ա:

Թագավոր խարցուց զարգյարին:

—Զարգյա՛ր, իմ խոր թագավոր ժամանակին դու մեզի խալխալ շինե՞ր ես:

—Խա՛, թագավո՛ր, շիներ եմ, բա՛:

—Ինչքա՞ն փողի:

—Իրեք միլոն:

—Անդրանե՛ք, գնա խալխալներ բե՛ր:

Անդրանեկ գնաց խալխալներ բերեց:

Թագավորն առավ խալխալներ տեսավ, տեսավ, որ Փալջիի բան ա.—Էս ծովեղեն բան ա, էս ձեռագործ չէ, զարգյա՛ր, դու սուտ կասես:

Թագավոր բերեց կապեց օրթումի.—Զարգյա՛ր, դու կերթվա՞ս, օր էսի քու շինած ապրանքն ա:

—Խա՛, թագավո՛ր:

Բերեց խաչ-Ավետարան դրեց, տերտեր բերեց կայնըցուց, Անդ-րանեկին ասավ.—Արի երթվա՛, թե իմն ա:

Անդրանեկն երթվաց, քաշվավ կրաղ կայնավ: Զարգյարին բե-րեց:

Զարգյար հարիր օխտանասուն տարեկան էր, հարուր մանեթի համար զարգյարն հորթվաց, պատուավ:

Նոր թագավոր վաքիլին էլ աքսորեց: Անդրանեկին բերեց, արավ ուրին վաքիլ, պսակեց: Էնոնք խասնին ուրանց մուրագին, մենք էլ խասնինք մեր մուրագին:

Երկնքից իրեք խալաթ իջավ, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկն էլ՝ գրողին: